ԱՊԾԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ

եւ

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԹԸ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼԻՊԵՆԿԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

Մենք ջանացինք կարելիին չափ ճիշտ գաղափար տալ Ապշերոնեան թերակղզում գործադրուող նաւթային շահագործութեան մասին. բայց քանի որ այդ կատարելագործութիւնները միայն երէկուանից են, մենք այժմ անցնենք նաւթային գործի զարգացմանը, այն կառավարչական սիստեմներին, որոնք դանդաղացրել են կամ խրախուսել են լառաջդիմութիւնը, այն յաղթութիւններին, որ տարել են ինտելիգէնտ գործարանատէրերը աւանդութեան և ամերիկական մրցման վերայ և, վերջապէս, այն խոչընդոտների վերայ, որոնք խանգարում էին Անդրկովկասեան նաւթի շահագործութեան ընդարձակուելուն.

Սկզբում, մեր դարու միջերքում, նաւթային գործը ոչ մի կարեորութիւն չէր ներկայացնում, ու այն էլ շատ պատճառներով՝ նախ որ կառավարութիւնը, մոնոպոլ ստեղծելով՝ թուլացնում էր գործարանական ջանքերը. երկրորդ՝ հաղորդակցութեան ճանապարհներ չը կային, որովհետև քարաւանները միայն փոքր քանակութեամբ էին փոխադրում Բաքուից Վլադիկաւկազ. Նաւթը սակաւ էր և թանկ, և Ռուսաստանում Տրանսիլւանիայի (ամերիկական) կերոսինն էր գործածւում. կամաց-կամաց գործիքները կատարելագործեցին, արդիւնաբերութիւնը աճեց և այժմեայ բարդաւաճման առաջին հիմունքները տուեցին 1872 թւականի հրամանով,

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 7—8, 9 և 10.

որը վերացրեց մոնոպոլը (մենաշնորհութիւն)։ Երկրորդ չրջանում (1872—1877), տէրութիւնը վերապահեց մարկալի իրաւունքը, իսկ 1877-ից այդ էլ վերացրեց։ Գործարանական ազատութեան ամեն մի նոր քայլին համապատասխանեց արդիւնաբերութեան կրկնապատկումը՝ գործիքների կատարելագործութեան և ճանապարհների չատացնելու պատճառով և միևնոյն ժամանակ ամերիկական կերոսինը, մաքսի պատճառով թանկանալով՝ անլեռանում էր ռուսական չուկաներից։ Եթէ աւելցնենք որ ուի լանձնաժողով է կազմած կալսեր հրամանով, նաւթի գործը կատարելագործելու միջոցներ որոնելու համար, դորանով մենք մի քանի խօսքերով ամփոփած կը լինենք այդ այնքան նոր, բայց և այնքան բեզմնաւոր գործի պարզ և կարճ պատմութիւնը։

Մոնոպոլի ամբողջ չրջանի ընթացքում, նաւթի արտահանութիւնը Բաքուից չնչին է եղել, նոյն իսկ Ռուսաստան. դեռ 1871 թուին 2,100,000 պուդ կերոսինից, որ գործ է ածել Ռուսաստանը, 1,720,000 պուդ բերուել է Ամերիկայից, և միայն 380,000 պուդ Բաքուից, 1876-ին՝ 13 միլիոնից 6 միլիոնը եկել է Բաքուից։ Եւ դեռ մինչ 1878 թուականը Բաքուից միայն ջրով կարելի էր փոխադրել, այսինքն միայն ամառը, քանի որ բոլոր ռուսական գետերը ձմեռը սառչում են։

Ահա, իրը դոկումենտ, Ապշերոնից արտահանուած հում կամ զտած նաւթի քանակութիւնը 1840-ից մինչ 1871 թուականը.

	մոնոպոլի ժամանակ հում նաւթ.			մոնոպոլը վերջացնելուց յետոյ հում նաւթ		զտած նաւթ.
1840	3,500	թոն.	1872	»		16,400
1845	3,500	»	1873	65,000	թոն.	»
1847	3,400	»	1876	195,000	»	55,000
1850	3,500	»	1880	400,000	»	150,000
1860	5,000	»	1883	800,000	»	206,000
1865	8,000	»	1888	2,500,000	»	800,000
1870	27,000	»	1889	2,780,000	»	900,000
1871	24,000	»	1890	3,000,000	»	1,000,000

Մի թոնը հաչուած 60 պուդ.

Մոնոպոլը, որ արուած էր Միրզոյեան եղբայրներին, տէրութեանը բերում էր 250 մինչ 300 հազար ֆրանկ, որը չնչին էր համեմատած նաւթալին գործին տուած ֆնասի հետ։ Ասացինք որ 1872 ին մոնոպոլը վերացաց և արդիւնաբերութիւնը իսկոյն կրկնապատկուեց։ Բայց այդ միջոցը իւր բոլոր պտուղները չէր ցոյց տալ եթէ միայն Նոբէլի ընտանիքը չը գար Բաքուում հաստատուելու համար։ Առանց որ մենք ստիպուած կարծենք մեզ մի քանի գլուխ նուիրելու այդ չատ նչանաւոր մարդկանց կենսագրութեանը՝ Ռոբերտ, Լուդուիգ, Ալֆրէդ, Էմանուէլ Նոբէլներին, մենք այնու ամենայ-

նիւ չենք կարող մի քանի խօսք չասել թէ ինչ մեծ ծառայութիւն են նոքա մատուցել նաւթային գործին. նոքա ոչ միայն Բաքուի ամենահաչակաւոր զտողներն են, նոքա նաև ամենախելօքն են, ամենապատրաստը ընդունելու և լաւագոյն ամենասարամիտը՝ հնարելու ամեն տեսակ կատարելագործութիւններ. այնպէս որ փոխանակ բաժանելու երեք պերիոդների՝ մոնոպոլի, մարկային վճարի և ազատ շահագործութեան, երբեմն բաժանում են այսպէս՝ շրջանը մինչև Նոբէլ եղբայրները, 2) Նոբելեան շրջան, որ սկսւում է Ռոբէրտ Նոբէլի հաստատելովը Բաքուում, 1875-ին։ Էմանուէլ Նոբէլը, հայրը, հնարեց տորպիլեօրները. Լուդվիգ և Ռոբէրտ Նոբէլ ինժեներները, որոնք Նեւայի նաւագործարաններում հռչակւել էին, դեռ Բաքու չեկած՝ ահագին հարստութիւն էին դիզել. վերջապէս Ալֆրէդ Նոբէլը ամբողջ աշխարհից ճանաչւած է որպէս դինամիտի (ուժանագ) հնարող (Nobels Explosive)։ Լուդվիգ և Ռոբէրտ եղբայրներն են որ հիմնեցին Բաքուում այնքան հռչակւած Նոբէլ եղբայրների տունը։

Նախ որ Նոբէլներից առաջ Բալախանից նաւթը դալիս էր Բաքու տակառների մէջ որ տանւում էին կառքերով կամ տարօրինակ սալերի վերայ։ Այդ նստում էր տարեկան 4 միլիոնից աւելի։ Նոբէլ եղբայրները առաջարկեցին իրանց կոնկուրէնտներին կառուցանել այժմեայ սիստէմը. նոքա մերժեցին. այն ժամանակ Նոբէլները վճռեցին իրանց հաշուով այդ չինել, որը շատ լաւ յաջողւեց. ճիլելով Նոբէլների մրցումով՝ հակառակորդները ստիպւեցին նոյնպէս խողովակներ դնել։ Խողովակները 3—12 սանտիմէտր տրամագիծ ունին և թեքւած են, այնպէս որ նաւթը ինքն իրան իջնում է Բալախանից Բաքու. ըստ հարկին՝ կարելի է գործածել շոգէ ջրհաններ։ Հասկանալի է որ այդ ժամանակից ի վեր արդիւնաբերութիւնը չափազանց արագութեամբ աւելացաւ. դա էր առաւելութիւնը, բայց դա միևնոյն ժամանակ նաև մի չարիք կը լինէր, եթէ միայն տրանսպորտի միջոցները նոյնը մնային, որովհետև Աստրախան գնացող նաւերը ողորմելի էին։ Նոբէլ եղբայրները առաջարկեցին Կասպեան և Վոլգայի այլ և այլ ընկերութիւններին երկար ժամանակամիջոցով պայմանագրութիւններ ցիստերն-նաւեր (tank steamers) չինելու համար, որոնք պէտք է ուղղակի ընդունէին հեղուկը առանց տակառների միջնորդութեան։ Այստեղ էլ Նոբէլները հանդիպեցին բուտինին և չկամութեան ե դրանից դղւած՝ իրանք իրանց արհեստանոցներում Պետերբուրդում չինել աւեցին ցիստէրն-նաւեր իրանց կերոսինը տեղափոխելու համար։ Այդ նաւերը դիպչում են գործարանի լեռնին, և խողովակներով նոցա մի քանի բոպէում լցնում են. Աստրախանում նոցա նոյնքան արագ վայր են բերում և նոյն ձևով լցնում վագոն—ամբարները, որոնց նոյնպէս Նոբէլների տունն է չինել. աւելի փոքր նաւերը կատարում են Վոլգայի դետային ծառայութիւնը։ Կասպից ծովի նաւերը, 90 մէտր երկարութեամբ և 8 մէտր լայնութեամբ, կարող են տանել մօտ 1000 թոն կերոսին (թոնը 60 պուդ). այժմ չինում են նաև

1500 թոն տանող նաւեր Սև ծովի համար։ Ցիստէրն-վագոնները տանում են մի տասնեակ թոն։ Միւս գործարանատէրերը հետևեցին Նոբէլ եղբայրներին, և այժմ մի քանի ցիստէրն—նաւեր շրջում են Բաքուի, Աստրախանի և Պարսկաստանի միջերքում և մի քանի հազար ցիստէրն-վագոններ՝ Ռուսաստանում և Կովկասում։ Այսպիսով վերացաւ նաւթի կուտակելու ամեն վտանգ, և երբ Բաթումի երկաթուղու գիծը բացւեց՝ սա շատ օգտաւէտ եղաւ, թէն նա այլ ևս անհրաժեշտ չէր։

Բայց և այնպէս Բաքուում եղան մի քանի ծանր կրիզիսներ տնտեսական և ֆինանսական, գլխաւորապէս լառաջացած նորանից, որ բաւականաչափ արագ չէր արտահանւում արտադրած նաւթը։ Դորա համար է որ առաջարկւեց Բաքուի և Բաթումի մէջ անցկացնել նաւթանցք, ինչպէս այդ կայ Բալախանի և Բաքուի մէջ։ Ծախքը հաշւում են 60 միլիոն ֆրանկ 900 վերստի համար։ Բայց այդ առաջարկը գեռ իրագործման շրջանը չի մտած։

Ռուսաստանի գետերի սառչելուց լառաջացող անլարմարութիւնները վերացնելու համար, Նոբէլ եղբայրները և ուրիշ լտողներ ահագին բեռներուարներ են կառուցել Ռուսաստանի ղանաղան կէտերում։ Յարիցինում Վոլգայի վերայ, որը վերջնակէտն է ռուսաց երկաթուղիների. Օրեօլում, ուր բեռներուարները կարող են տանել մինչ 100 միլիոն հեկտօլիտր։ Նոյն նպատակով առաջարկել են երկաթուղիների շարունակութիւնը Վլադիկաւկազից Պետրովսկ, որը Դաղստանի նաւահանգիստն է. 24 ժամ Բաքուից հեռու. Պետրովսկից կարելի էր այն ժամանակ երկաթուղի անցկացնել մինչ Բաքու և կամ ցիստերն-նաւերի երթևեկութիւն սարքել։ Անկասկած, ռուսաց կառավարութիւնը չի լապաղիլ միացնել Վլադիկաւկազը ծովի հետ, որովհետև այդ բանում ռազմագիտական շահ ունի՝ գեռ աւելի քան վաճառականական շահ։

Աւելցնենք որ նաւթային գործը մի նոր կեանք է տուել Բալթեան ծովի առեարին, ուր ղանաղան նաւահանգիստներ և մասնաւորապէս Լիբաւան, որոնք ջրանցքներով ուղղակի կապւած են Վոլգայի հետ, արտահանման մեծաքանակ առևտուր ունին Գերմանիայի, Բելգիայի և Ֆրանսիայի հետ։

V

Անշուշտ կը հարցնեն թէ ինչ պէտք է լինի մի գետի կազմութիւնը, որը այդքան հարուստ է ջրածուխներով, այդքան հարուստ ամեն տեսակ երեոյթներով, նաւթի խաւերով, հրաբխային ժայթքումներով, ցեխի և կրակի կրատէրներով, չը վառող գազերի աղբիւրներով, բայց և կատարելապէս անբերրի և զուրկ բուսականութիւնից։ Այլ և այլ դիտողականներ ուսումնասիրել են նաւթի գոյանալը գէօլոգիական այլ և այլ ժամանակ-

ներում, և չը նայած որ առաջարկված հիպոթէզները մեծագոյն մասով վիճելի են, բայց մենք հետաքրքրական ենք գտնում այստեղ նոցա առաջ բերել։

Ամենքը ընդունել են որ ամերիկական նաւթը հանդիպում է առաջին շերտում (terrains primaires), մինչդեռ Բաքուի նաւթը արալական-կասպեան կազմութեան երրորդ շերտերում (couches tertiaires)։ Բայց այստեղ սկսում է տարաձայնութիւնը. մէկերի ասելով՝ նաւթը գոյացել է բուսական նիւթերի լուծելուց հողի տակ, մինչդեռ միւսները նրան լատկացնում են կենդանական ծագումն։ Առաջինները հիմնւում են այն բանի վերայ, որ նաւթային խաւերը հարևան են քարածխային խաւերին և, բացի դորանից, քարածուխից ստանում են նոյնպիսի իւղեր որպէս նաւթից, այս զանազանութեամբ որ նոքա չեն լուծւում բենզինի մէջ։ Այսպիսով ուրեմն կարծեցին թէ նաւթը գոյացել է որպէս քարածուխը՝ փակ տեղում բոյսերի լուծելուց. գազային արտադրութիւնները և սրբազան կրակները հետևապէս պէտք է լինեն այդ կազմալուծելու հետևանքը, որովհետև դետնի տակ եղած բեղերուարներում ժողովված գազերը մնում են այնտեղ ահագին ճնշման տակ. գազերը դուրս գալով՝ վերականգնում է հաւասարակշռութիւնը գազերի ճնշման և մթնոլորդի ճնշման մէջ։ Նրբեմն հաւասարակշռութիւնը վերականգնում է աւելի բուռն կերպով՝ լայնի է թէ լաճախ ինչ սարսափելի ժայթքումներ են լինում հոր փորելիս, որոնք դուրս են մղում ամենածանր գործիքները և ծնունդ տալիս այն ժայթքող հորերին կամ չաղրաններին, որոնք թէ վտանգաւոր են և թէ անպտուղ։

«Հաւանական է, ասում է պ. Վինչել (Winchell), որ նաւթը երբեմն բարձրանում է գետնի երեսը նոյն տեսակ ուժի ազդեցութեամբ, ինչպէս արտեսեան ջրհորներն են. բայց պէտք է կարծել որ աւելի լաճախ այդ մղումը լառաջանում է գազերի ճնշումից։ Կարող է պատահել որ մի ստորերկրեայ խոռոչ (cavité) կամ ծակոտ քարաժայռերի մի կտոր, փակված լինելով անթափանցելի խտերի մէջ՝ պարունակում են քարածուխ իրանց ներքևի մասերում, մինչդեռ մնացածը լցված է գազային ջրածուխներով։ Այդ խոռոչները (դատարկութիւնները) կարող են զանազան ձևի և անորոշ մեծութեան լինել, և կամ բաղկացած լինել շատ խոռոչներից կամ հաղորդակցող ճեղքվածքներից. բայց միշտ էլ հեղուկի հետ կը լինեն գազեր, մեծ ճնշման տակ։ Այս դէպքում ճնշումը լառաջացած կը լինի օրգանական նիւթերի քիմիական կազմալուծութիւնից, բայց ոչ թէ աւելի բարձր խաւերում գտնւող հեղուկի ծանրութիւնից, ինչպէս այդ արտեսեան ջրհորների դէպքումն է լինում։ Եթէ, պատահմամբ, փորելու ժամանակ հասնում են խոռոչի վերին մասը, գազը սաստկաբար դուրս է գալիս մինչև որ նորա ճնշումը հաւասարվի մթնոլորդի ճնշմանը։ Այս դէպքում, նաւթը ստանալու համար՝ պէտք է դիմել ջրհանների օգնութեանը, որովհետև գազի ներգործութիւնը ոչ միայն չի բարձրացնում հեղուկը, այլ ընդհակա-

ռակը, մղում է նորան դէպի ներքև։ Երբ հոր փորելը թափանցում է խոռոչի ոչ այն մասը որ գաղ է պարունակում, ապ այնտեղ ուր իւղն է հաւաքւած, այն ժամանակ գազը, ներգործելով հեղուկի վերայ՝ սորան կը մղի դէպի հորը և տեղիք կը տայ ժայթքող աղբիւրի և շատրւանը կը տեսի մինչև որ հաւասարակշռութիւնը կը վերականգնի. բայց երբեմն գազի ուժը այնքան մեծ է, որ խոռոչը բոլորովին դատարկւում է։ Երբ հաւասարակշռութիւնը վերականգնում է աղբիւրի սպառւելուց առաջ, այն ժամանակ պէտք է լինում դիմել ջրհանների օգնութեան, ինչպէս վերը լիշած դէպքում։

«Մէջ ու մէջ խփող շաարւանների հորերը, որպէս երևում է, որոշ դէպքերում գործում են որպէս մէջ ու մէջ գործող (ընդհատւող) ջրի շաարւանները. սակայն մեծ մասամբ գազային ջրածուխներն են արտադրում նոցա։ Կարող է պատահել որ փորւածքը հասնում է մի ճեղքւածքի որ լիքն է սեղմւած գազով, անցնում է նորա միջով և վերջապէս հասնում մի խոռոչի որը նաւթ է պարունակում. նաւթը կը փախչի գէպի հորը, կը բարձրանայ մինչև ճեղքւածքի վերևի մասը ե թող կը տայ որ գազերը դուրս գան։ Երբ հեղուկի խաւը շատ հաստ չէ՝ գազը նորան կը բարձրացնի և դուրս կը մղի դէպի օդը՝ մաղւող անձրևի նման. երբ հեղուկի մասսան աւելի ծանր կը դառնայ՝ նա դուրս կը ժայթքի մի շատրւանով, որ մի քանի վայրկեան կը տևի և դորանից յետ կը լինի գազային արտավիժումն. յետոյ նաւթը նորից կը լցնի հորը մինչև որ նորից առաջւայ պէս դուրս ժայթքի և այսպէս շարունակ։ Նոյն երևոյթը կը լինի, եթէ գազային խոռոչը գտանւում լինի նաւթային խոռոչի տակ և մինչև անգամ եթէ երկու խոռոչներն էլ նոյն մակերևոյթի վերայ գտնւեն։

Մենք գիտաւորութիւն չունենք այստեղ առաջ բերել ժամանակիս քիմիկոսների թէորիաների մանրամասները նաւթի ծագման մասին. բայց այն կարծիքից յետոյ թէ նաւթը և քարածուխը միևնոյն ծագումից են, մենք կը լիշենք միայն կարծիքը այն բոլորի, որոնք քարածուխի և նաւթի հիմնական տարբերութիւնից եզրակացնում են նաև նոցա գոյանալու կատարեալ տարբեր պատճառներից լինելը։ Մի կողմում նոքա են, որոնք, որպէս Էնգլէր (Engler) Կարլսրուէից և Հոֆէր (Hoter) Լէօբէնից և դոցա հետ ամերիկական քիմիկոսների մեծամասնութիւնը, նաւթի մէջ տեսնում են մի հետևանք ծովային անասունների մնացորդների կազմալուծութեան։ Դորա ապացոյցը այն են համարում նոքա, որ նաւթը լինում է այն գետիններում, ուր ծովը յետ է քաշւել, բայց որոնց նա ծածկում էր մի ժամանակ. Բայց այդ նկատողութիւնը, որ միանգամայն ճիշտ է, հաստատում է քիչ փոփոխութեամբ նաև այն քիմիկոսների կարծիքը, որոնք նաւթին բուսական ծագումն են վերագրում. ծովային բոյսերը գոյացրել են ջրածուխները, մինչդեռ գետնի վերայ ծառերը և մեծատերև տունկերը արտադրել են քարածուխը։ Ինչիցն է այդ տարբերութիւնը. մինչ այժմ այդ

դեռ չեն մեկնել։ Պր. Բերթելոն (Berthelot), Annales de physique et de chimie տարեգրի մէջ (1866. հատոր IX. երես 482) մեկնում է՝ ներգործական դեր տալով մետաղներին, որոնք ներս են մտել գետնի մէջ։ Նորա թէորիան, որը հիմնուած է այն ներգործութեան վերայ, որ ունենում են լայնի մետաղները քիմիական բաղադրութիւնների մէջ, հաւանութիւն չը գտաւ մասնագէտ երկրաբանների (գէոլոգ) կողմից, և պ. Կրիւ (Crew) մեծ տաքութեամբ նորա դէմ հակաճառեց։ Իրերի այժմեան վիճակում դժուար է գուշակել թէ թէորիաներից որն է յաղթող լինելու։

Զուտ ֆիզիքական հիպոթէզները ընդհանրապէս աւելի քիչ են անորոշ. օրինակ, հեշտ է հաստատել Լուդվիգ Նոբէլի թէորիան՝ նաւթային բեղերուարների այժմեան բազմութեան մասին. մի թէորիա, որը հիմնուած է կովկասեան նաւթերի քիմիական բաղադրութեան տարբերութեան վերայ։ Եւ իրօք, եթէ մի ընդհանուր ստորերկրեայ բեղերուար գոյութիւն ունենար, այն ժամանակ բոլոր հորերից նաւթ կը դուրս գար. մինչդեռ իրողութիւնը հակառակն է ցոյց տալիս։ Պէտք է ուրեմն ենթադրել, որ նաւթի ստորերկրեայ ամբարները մեծ մասամբ իրարից անկախ են։ Անշուշտ կարող է լինել որ երկուսը իրար հետ հաղորդակցւում են որ և է անկատ պատճառով, երբեմն գործածած դինամիտի ուժով. դորանով բացատրւում է թէ ինչու մի նոր հոր չքացնում է միւս հորը և կամ ինչու մի սպառուած հոր կարող է յանկարծ նորոգուել։ Այս ամենը բոլորովին պարզ է և ինչպէս երևում է՝ քիչ վիճելի է։

Թող ներւի մեզ հիպոթէզների մեղպիսի կուսակումն մի ուսումնասիրութեան վերջում, որը սկզբում կարծէք թէ կարող էր առանց նոցա եօլա գնալ։ Վաճառականութեան պատմութիւնը, առօրեայ շահագործութեան մանրամասները ունին անմիջական հետաքրքրութիւն. և այս աչխատութեան առաջին գլուխները ապացոյց տին որ մենք անտարբեր չենք նոցա նկատմամբ. բայց առանց թէորիայի՝ պրակտիկան շուտով աւանդական է դառնում. արևատը, առանց գիտութեան օգնութեան, դառնում է անշարժ, ալսինքն յետադիմում է. և առանց բազմաթիւ փորձերի, առանց քիմիկոսների կամ ֆիզիկոսների սրամիտ փորձերի՝ Բալախանի նաւթը, որ առաջուայ դանդաղութեամբ կը փոխադրուէր և անշնորհք կերպով կը զուէր՝ կը մնար Կովկասում անօգուտ, մինչդեռ ամբողջ Ռուսաստանում դեռ գործ կ'ածէին Պենսիլվանիայի կերոսինը։

Մեր Կովկասեան ճանապարհորդութիւնից զէս՝ Բաքւի նաւթի շահագործութիւնը և արտահանութիւնը աւելացել են սպասածից վեր. բայց և այնպէս Թուրքեստանի և Մուզանի բոլոր աղբիւրները դեռ ևս մնացել են ձեռք չը տուած. վաղելինի, բենզինի և անիլինային գոյներ գոյացնող այլ և այլ նիւթերի ֆաբրիկացիան դեռ ևս շատ բարձի թողի է արուած. եւրոպական ինժեներների թւի պակասութիւնից, որոնք դուրս եկած լինէին օրինակ ֆրանսիական մեծ դպրոցներից. նաւթի գործը դեռ չի իրակա-

նացրել բոլոր ցանկալի յառաջդիմութիւնները. Սուրամի տունէլը նոր է բացուած, և, որ գլխաւորն է, Մակ Կինլէյի բիլլը, որով Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները փակւում են եւրոպական արդիւնքների համար, դեռ ևս իւր բոլոր պտուղները չի աւել։ Որովհետև, որպէս հաւանական է, եւրոպական պետութիւնները իրանք էլ հրաժարւեն Միացեալ-Նահանգների արդիւնքները ընդունել. Բաքւի նաւթի գործածութիւնը կը տասնապատկւի և դեռ աւելի։ Թէկուզ յետոյ Մակ-Կինլէյի բիլլը վերացնեն, բայց Կովկասեան արդիւնքը՝ իւր լուսատու ոյժով գերազանց լինելով, ունենալով աւելի մեծ ոյժ պատրոյգի մէջ բարձրանալու և նոյնքան մաքուր և աժան որքան ամերիկականը, մի անգամ որ ձեռք բերած կը լինի առաջին տեղը—այլ ևս իւր այդ տեղը երբէք չի կորցնիլ։ Ֆրանսիայի և Ռուսիայի հետ ունեցած բարեկամական յարաբերութիւնները կը նպաստեն երկու երկիրների առևտրական կապերի զարգացմանը. մի խօսքով՝ այս 1891 թւականին բոլոր հանգամանքները խօսում են յօգուտ մօտագայ և վերջնական յաղթանակի ռուսաց կերոսինի։ Բիրմանայի անգլիական նաւթի մրցումը—որքան էլ նա առատ լինի ինչպէս այդ պնդում են Լոնդոնում, մեզ չի կարող վրդովեցնել. բայց այժմեանից իսկ ամերիկական մրցումը մեզ չի սարսափեցնում։